

ՏԱՍԵՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Կոմիտէի Կարգաւարտին «Մշակ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և ածն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիւրով:
Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Երաժշտական կրթութիւն:—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Գնեցող Սիօրոսի վճար: Նամակ խմբագրին:—ՀԵՌՈՒՄԻՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Գաւիթ բէկ:

ԵՐԱՇՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Շատ քիչ ազդ կայ աշխարհիս երեսին. որ հայերի պէս բուն գործնական ոգու հետ միացնել այդքան բնական ձիւղերը գեղարուեստի, նկարչութեան, երաժշտութեան, երգեցողութեան և այլն: Բայց, դժբաղդ պէս, այդ բոլոր ձիւղերը մնում են անմշակ մեր մէջ:

Փետրվարի 21-ին դուրս գալով կօնցերայից և գանվելով Մարիամեան-Անանեան դպրոցի աշակերտուհիներին խօրական ներդաշնակ երգեցողութեան, պ. պ. Ալիխանովի, Կորգանովի, օր. Խորոսովի խաղի սպաւորութեան տակ, մենք ակամայ մեզ հարց էինք առաջարկում. ո՞րքան տաղանդներ կը ծննցնէր ազգը, եթէ մեզանում գեղարուեստական և երաժշտական կրթութիւնը արհամարհված չը լինէր:

Երաժշտական այբբէնը չիմացող ծիսական դպրոցի օրիորդները, առաջնորդութեամբ երաժշտութեան գործի մէջ մի ինքնուս վարժապետի, երիտասարդ քահանայ Գովոսէփեանի, կազմեցին մի երգեցիկ խումբ, որ երաժշտութեան մէջ կրթված կազմակերպված երգեցիկ խմբի սպաւորութիւն է գործում: Արքան աւելի առաջադիմութիւն կանէր հայոց նոր սերունդը գեղարուեստի և երաժշտութեան մէջ, եթէ գեղարուեստը և

երաժշտութիւնը կանօնաւոր դիրք ստանային մեզանում, եթէ մեր նոր սերունդին արվէր գեղարուեստական և երաժշտական խիստ կրթութիւն:

Երաժշտական խիստ և կանօնաւոր կրթութեան բացակայութեան մասին մեր ցաւակցութիւնը յայտնելով, մենք դիմեցինք կօնցերայի ժամանակ Գայեանեան դպրոցի տեսուչ պ. Խորոսովին և Թիֆլիսի երաժշտական դպրոցի կառավարիչներին մինչև, պ. Ալիխանովին, հարցնելով նրանց, արդե՞ք հնար չը կայ գոնէ մեր օրիորդաց դպրոցներում մտցնել երգեցողութեան կանօնաւոր ուսում:

Պ. Ալիխանով յայտնեց իր պատրաստակաւ նութիւնը ճիշտպէս երգեցողութեան դասեր տալ այդ երկու դպրոցների աշակերտուհիներին, կազմելով երկուսից մի երգեցիկ խումբ, եթէ այդ երկու դպրոցների վարչութիւնները գոնէ շարժվել մի կամ երկու անգամ համաձայնվեն ուղարկել իրանց սանուհիներին երաժշտական դպրոց:

Չենք կարող չը դիմել Գայեանեան և Անանեան դպրոցների վարչութիւններին, խորհուրդ տալով նրանց որ օգուտ քաղեն պ. Ալիխանովի գեղեցիկ առաջարկութիւնից, մանաւանդ որ Գայեանեան ուսումնարանի տեսուչ պ. Խորոսովի, ինքն յայտնեց մեզ որ այս տարի դիտարկութիւն կայ վերջապէս մտցնել այդ դպրոցում կանօնաւոր երգեցողութիւնը բաժանված, երեք ձայններով:

Չենք կարող մեր ցաւը չը յայտնել որ մեր երիտասարդ քահանայների մէջ այնպիսի տաղանդաւոր անձնաւորութիւններ, ինչպէս տեղ Գաղարոս և տեղ Եղիշիկ, երգեցողութեան և երաժշտութեան մէջ ինքնուս մնալով և չենթարկվելով երաժշտական կանօնաւոր կրթութեանը, ի զուր կորցնում են

իրանց ոյժերը, հնար չունենով իրանց ձիրքերը գործ դնելու յօգուտ մեր հասարակական կրթութեան: Նրանք պէտք է դեռ կրթվեն կանօնաւոր երաժշտութեան մէջ:

Թող չը մոռանան հայերը, որ հայկական ամենահին դպրոցներում, ինչպէս մեզ ապացուցեց հայր Խորէն Ստեփանէ Թիֆլիսի հնագիտական ժողովի վերջին նիստում կարգացած իր գեղեցիկ ճառի մէջ, կանօնաւոր երգեցողութիւնը միշտ կազմում էր ուսանելի առարկաների թւում ամենազիջաւոր առարկաներից մէկը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՐԹԱԳԻՒՆ

Վերին-Աղուլիս, 9 փետր.

Վ. Աղուլեաց օրիորդական ուսումնարանի 2-րդ դասարանի աշակերտուհիք բաց արին յօգուտ աղքատ մանուկների ստորագրութիւն, և որոշեցին այդ դուստրի կէսն յատկացնել Կ. Պօլսի որդանոցին, իսկ կէսը, ինչպէս և սնցեալ տարի, աղուլեաց աղքատ աշակերտուհեաց:

Իմ կարծիքով, կրթութիւնը իր զիջաւոր նպատակները մինչև հասած պէտք է համարել, երբ մանուկներին հասցնում է այն աստիճանին, որ նրանք, առանց վարչութեան առաջարկութեան, առանց մինչև անգամ որ և է ակնարկութեան, կամ արհեստական նախապատրաստութեան, զգում են իրանց մէջ զմտարտութիւն զգալի մեծաւոր կարողանում են այդ զգացմունքը գործով արտայայտել և այդ ևս չէ բաւական, նրանց մէջ այս զգացմունքը այնքան է զարգանում, որ կամենում են իրանց օգնութեան ձեռքն աւելի հեռու մղեն: Անա այն ուրախալի երեկոյթը, որի տեսութեանը այսօր ես արժանանում եմ: Անա այն միջիթարութիւնը, որը ախտում է հազարաւոր կողմնակի ստացած վշտերը: Այո, ևս կարող եմ

ասել, որ այսպիսի կրթութիւնը, եթէ երկարատեւ լինի, մեծ ազագայ է խոտանում Աղուլեաց հասարակութեանը:

Թող այս գործին աշխատող օրիորդները ընդունեն իմ խորին զգացմանց հնորակալիքը, սակայն և ոչ պակաս հնորակալութեանց արժանի են և այն անձինք, որոնք իրանց մասնակցութեամբ խրախուսեցին օրիորդաց զովանի գործին:

Մի և նոյն ժամանակ ուղարկում եմ ձեզ 53 մանկթ—50 կոպէկից, 27 մանկթ, խնդրելով որ բարեհաճէք հասցնելու Կ. Պօլսի որդանոցի տնօրէնութեանը և տպագրել ձեր պատուական լրացրի մէջ նուիրատուաց ցուցակը: Հողերական ունե, 5 ռ., Աղամիրզեանց Սաթիւի 1 ռ., Փանեանց Հեղինէ 1 ռ., Արասխանեանց Շուշանիկ 1 ռ., Փանեանց Սառա 1 ռ., Գաւրաբեանց Մարիամ 1 ռ., Շահնազարեանց Եւզնիս 1 ռ., Շահնազարեանց Ասողիկ 1 ռ., Փանեանց Շուշանիկ 60 կ., Աբրահեանց Կատարինէ 40 կ., Գեորգեանց Հայկանուշ 60 կ., Նիգոլեանց Աննա 20 կ., Միքայէլեանց Հայկանուշ 20 կ., Փանեանց Հայկանուշ 40 կ., Յակոբեանց Մարիամ 1 ռ. 50 կ., Խօջամիրզեանց Սաթիւիկ 30 կ., Բաղդանց Սաթիւիկ 40 կ., Աբրահեանց Նուսէ 50 կ., Մարգարեանց Սովիա 60 կ., Հարինազարեանց Գայիանէ 1 ռ., Արասխանեանց Աշխէն 50 կ., Ներսիսեանց Աննա 1 ռ., Ներսիսեանց Սօֆիա 1 ռ., Ներսիսեանց Նուարդ 1 ռ., Աղամիրզեանց Մարիամ 20 ռ., Տէր-Միքայէլեան Վարվարա 1 ռ., Աղամիրզեանց Ասողիկ 1 ռ., Միջօնեանց Մարիամ 1 ռ., Գեորգեանց Եւզնիս 20 կ., Գեորգեանց Սաթիւիկ 20 կ., Փանեանց Սաթիւիկ 60 կ., Հակոբեանց Լուսաբեր 60 կ., Աղամիրզեանց Լուսաբեր 1 ռ., Աղամիրզեանց Աղիսարէթ 1 ռ., Արամիսեանց Փառանձեմ 1 ռ., Արասխանեանց Կատարինէ 1 ռ., Տէր-Գեորգեանց Փառանձեմ 40 կ., Տիկ. Մնացականեանց Հռիփսիմէ 1 ռ., Յակոբեանց Մանուշակ 1 ռ., Տէր-Վերտեանց Եղիսարէթ 1 ռ., Տէր-Վերտեանց Սառա 3 ռ., Խօջամիրզեանց Փեկերտիս 1 ռ., Աբրահեանց Սօֆիա 1 ռ., Տէր-Միքայէլեանց Հռիփսիմէ 1 ռ., Ռաֆայէլեանց Վարդուհի 1 ռ. 50 կ., Հակոբեանց Թէոդորոս 60 կ., Թիւրխեանց Ռուբին 1 ռ.,

ԴԱՒԻԹ ԲԷԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ

(1722—1728)

ԼԳ.

Արեւակը այժմ թափում էր իր լոյսը և ջերմութիւնը լեռնային աշխարհում: Բնութիւնը մշտապէս էր դեղածիծաղ պայծառութեամբ: Գիշերաւիտ խառնակ մէջ մրտիած անտառը, զարթնելով իր հակապակաս քնից, այժմ օրօրվում էր, ծիւղում էր կանաչազարդ ծովի նման: Մտաբեր, ծաղիկները, շարժվելով մեզմ գեփիւրէ: Նրապարանքից, կարծես, գրկվում էին, համբուրվում էին, ողջունում էին միմանց առաւօտը:

Օրվայ այդ խորհրդաւոր ժամուն արմաշէլը բընութեան նետ զարթնում է և մարդկային կեանքը: Հովիւր իր հօտերը քշում է դէպի լեռների գառիկները. մշակը դաշտում կամ հերկում է, կամ հնձում է. ձորերի և ձմախնների մէջ նախշուն թիթեանիկների նման վծվում են դիւրացի աղջիկները: Մարդը սկսում է գործել:

և կայքը ազատ պահեն հորիների բարբարոսութիւնից:

Մի մարդ միայն նստած էր իր ճգնարանի մուտքի հանդէպ, և տխուր խորհրդածութեան մէջ, ժայռերի բարձրութիւնից նայում էր դէպի շրջակայ ձորերը: Անպիսի պիտի ծառի տերեւախիտ ոստերը պահպանում էին աւերող դուրիւր արեւի այրող ճառագայթներից: Երբեմն մի շողք ժապակիի նման ճիւղերի միջից ցալանում էր նրա մոլորազննադոյն դէպի վրա և աւելի որոշ կերպով արտայայտում էր երեսի տխուր գծերը:

—(Սպասիր ինձ), ասաց նա, ես սպասում եմ, բայց ինչո՞ւ այդքան ուշացաւ...

Քառորդ ժամից յետոյ մի այլ ձերուհի, ծառերից բռնելով, ժայռերի վրա մազլեղելով, ցած էր իջնում դէպի ճգնարանը: Ըլ ոչ աղօթքը պէտք է և ոչ ծնրագրութիւն, ասում էր նա ինքն իրան, —այդ քարափներից ամեն օր իջնելը մի մեծ արաշխարութիւն է...

Լսելով նրա ձայնը, պիտի ծառի ստուերի տակ նստած մարդը, որը ոչ այլ ոք էր, եթէ ոչ դէրվիլը, վերկացաւ, մտնեց և կուրծքին, սկսեց օգնել նրան, որ ցած չընկնէ: Եկուրը ներքինապետն էր:

—Գուք ինձ բաւական սպասել տուիք, Անձը, ասաց նրան դէրվիլը:

—Եթէ դուք գիտե՞նայիք պատճառները, չէիք մտադրի ինձ, պատասխանեց ներքինապետը: Երկուսն էլ մտան այրի մէջ. այնտեղ աւելի ապանով էր, ոչ ոք չէր տեսնի նրանց:

—Հիմա պատմեցէք, ինչ խօսեցիք խանի հետ, հարցրեց ներքինապետը, նստելով խոտեղէն օթնի վրա, որով ծածկված էր այրի յատակը:

Գէրվիլը պատմեց, թէ ինչ նպատակով էր կանչել իրան խանը, ինչ գուշակութիւններ արեց ինքը պատերազմի վախճանի մասին, և ինչ խորհուրդներ տուեց նրան, որոնք զժբախտաբար ընդունելութիւն չը գտան:

—Ես գուշակութիւններին շատ փոքր եմ հաւատում, ասաց ներքինապետը, —դուք ինձ այն ասեցէք, թէ ինչով կարողացաք հասկանալ, որ այսօր խանը յաղթող կը հանդիսանայ, իսկ մի քանի օրից յետոյ կրկին կուլ կը լինի, որի մէջ նա կը յաղթվի:

—Այդ բոլորը հասկանալու համար, պատասխանեց դէրվիլը, —ոչ կախարչութիւն և ոչ էլ գերբնական գիտութիւններ պէտք են, այլ հարկաւոր է փոքր ինչ առողջ դատողութիւն ունենալ: Եթէ դուք կարողացած լինէիք Մէլիք-Յարսնի վրէժ խանին գրած նամակները, մի և նոյն նախագուշակութիւնները կանէիք:

—Մէլիք-Յարսնի վրէժ նամակները... դուք ձեռնարկում արտափելով:—Ինչպէս յաջողեցաւ ձեզ կարգաւ այդ շարագործի նամակները:

Գէրվիլը այնքան մտերիմ էր ներքինապետի հետ և այնքան յարգում էր նրա բարեկամութիւնը, որ ոչինչ չը ծածկեց նրանից և միջամտեց պատմեց, թէ ինչ հանգամանքներից օգուտ քաղելով, կարողացաւ կարգաւ նամակները: Յետոյ հարցրեց նրան նամակների բովանդակութիւնը, որից պարզ երևում էր, թէ որպիսի խաբէութեամբ հայոց զօրքերին պէտք է որոգայթի մէջ ձգելին:

—Հիմա հասկանում եմ... ասաց ներքինապետը հոգոց հանելով:— Դուք այդ նամակների բովանդակութիւնից կարող էիք նախագուշակել այսօրվայ կուլի աղէտալի վախճանը: Բայց ինչով էք

խանում, որ յետոյ մի ուրիշ կուլ կը լինի, որի մէջ խանը կը յաղթվի:

—Այդ շատ հեշտ է իմանալ. այսօրվայ կուլի մէջ խանի զօրքերի յաջողութիւնը պէտք է վերաբերել Մէլիք-Յարսնի վրէժ գաւառապետութեանը: Իսկ յետոյ, շատ հասկանալի է, որ բէկը աւելի լուս պատրաստութեամբ զօրքեր կուղարկէ և նրանք կը ջարդեն մահամղականներին:

—Այդ բոլորը շատ հաւանական է, ասաց ներքինապետը:—Բայց դեռ ոչ չէ, կարելի է այսօրվայ շարեաց առաջը առնել: Իսկ ես բոլորովին չուարած եմ, ինչքա համարեա զիջումս չէ: Գուք իմաստուն մարդ էք, դէրվիլ, մի խորհուրդ տուեցէք, արե՞ք ինչով կարող եմք փոխադր հեռացնել:

—Գուք դեռ չեկած, ևս դրա վրա էի մտածում, պատասխանեց դէրվիլը:—Բայց միթէ դուք մինչև այսօր չէիք նկատում Մէլիք-Յարսնի վրէժ խաբէութիւնները, ինչու չը փութացիք նախապէս զգուշացնել հայոց զօրապետներին:

—Ես նկատում էի, որ գաղտնի կերպով ինչ որ դաւաղութիւն սարգվում է, թէն ինձ համար բոլորովին պարզ չէր նրա մանրամասնութիւնները, այսու ամենայնիւ, շտապեցի մի սուրճանակ ուղարկել Թորոս իշխանի մօտ և զգուշացնել նրան:

—Բայց Թորոսը կարող էր չը հաւատալ ձեր սուրճանակին, որովհետեւ նա ձեզ չէ ճանաչում:

—Այդ ևս մտածեցի, դրա համար էլ սուրճանակը ուղարկվեցաւ Վրէժի մօտ, ոչ թէ ուղղակի Թորոսի մօտ, այլ Ստեփաննոս իշխանի մօտ: Իշխանի յարաբերութիւնները Վրէժի հետ ձեզ յայտնի են...

դպրոց սատարի բուքի պատճառով, չորս օր տանը մնացին և զրկվեցան ուսումից: Վարկերի կենդանիները թափում են գիւղը: գիւղացիները նրանց կտորում են:»

Նոյն տեղից մեզ գրում են որ այս օրերս աւաղակները թափվելով մի քանակ արհեստական օթի խմելու մարդու վրա, սպանել են նրան և անասնաբույժի վրա թողել են նրա դիակը: Այսին վածի ծոցում դանդաղ են բաւական թղթագրութիւններ, կարգված և արհեստաված:

ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՆԵՐԱԿԱՆ ՍՊՈՐՏԻՆԻ ԶԱՌԸ

Բերլինից «Голосъ» լրագրին գրում են հետևեալը:

Գեներալ Սփորթլի փարիզի մէջ արտասանած ճառը ամեն տեսակ խօսակցութիւնների առարկայ է դարձել: Հասկանալի է, որ այստեղ այդ ճառին ոչ ոք համակրութեամբ չէ վերաբերում: Ամենամեծ տպաւորութիւն այդ ճառը գործեց բոսալի շրջանների վրա, որոնք վախեցան մի մեծ պատերազմի սկսվելուց: Ինչ կը վերաբերի գերմանական լրագրիներին, նրանք մինչև անգամ ուրախ են, որ Սփորթլի այդքան բացարձակ խօսեց: Այդպիսի ճառերը առատ նիւթեր են տալիս պոլեմիկայի համար, որ իւրաքանչիւր լրագիր մեծ ուրախութեամբ է սխտում: Աւելորդ է ասել, որ գերմանական մամուլը միաձայն պնդում է, որ Գեներալին ոչ զքի չէ սպառնում, բայց մի և նոյն ժամանակ վախեցնում առիթ էլ չունի և այդ պատճառով Սփորթլի ճառը անկարող է դժուարութիւն պատճառել գերմանական կառավարութեանը: Պաշտօնական շրջանները զոգուելով են վարկում: Հաւատարմութեամբ են, որ գերմանական և ուրախ կառավարութիւնների մէջ պաշտօնական բանակցութիւններ չեն լինի այդ ճառի առիթով: Միայն թէ գերմանական զեւպանը Ս. Պետերբուրգի մէջ ուսուց արտաքին գործերի մինիստրի հետ մասնաւոր խօսակցութիւն կունենայ այդ ճառի մասին: Գերմանական կառավարութիւնը ուրախութեամբ նկատում է, որ գեներալ Սփորթլի ճառը նպատակ աւստրո-գերմանական դաշնակցութեան ամրացնելու և ցոյց տուեց այդ դաշնակցութեան անհրաժեշտութիւնը: Այսպէս թէ այնպէս ուսուց և գերմանական կառավարութիւնների յարաբերութիւնները շատ լաւ են և նրանք համաձայն են եւրոպական նշանաւոր հարցերի վերաբերութեամբ: Բացի այդ ուսուց կառավարութիւնը Հերցեգովինայի մէջ ապստամբութեան սկսվելուց յետոյ խորհուրդ տուեց Սերբիային և Չեռնոգորիային չեղր մնալ:

«Standart» լրագրի Բերլինի թղթակիցը հազարում է հետևեալը այն տպաւորութեան մասին, որ գործեց կայսր Ալիքսէնդի վրա գեներալ Սփորթլի ճառը: «Ես կարող եմ հազարել ձեզ հաստատ աղբիւրներից, որ գեներալ Սփորթլի ճառը Ալիքսէնդ կայսրին սատարի բարկութիւն և ցու պատճառեց: Նորին մեծութիւնը նկատեց, որ յոյս ունի իր ձեռութեան մնացած տարիները խաղաղութեամբ անցկացնելու և ցուակցութիւն յայտնեց, որ նա տեսնում է այնպիսի թեթեւաբան յարաբերութիւններ, որոնք, եթէ շարունակվեն, կը ստիպեն նրան դիմել եռանդոտ միջոցներ: Ես լսեցի, որ գերմանական զեւպանին Ս. Պետերբուրգի մէջ յանձնված է Գեներալի կողմից բողոքելու ուսուց կառավարութեանը, որ ուսուց բարձրատիճան գեներալներից մէկին թող է արժանի այնպիսի մտքեր յայտնել, որոնք

չեն կարող անհանգստութիւն չը սերմանել Գեներալի և Աւստրո-Ռուսարիայի մէջ:»

ՆԱՍՏԱԿ ԹԻՒՐԻՆՆԵՐ

Բիթլիս, 19 յունվարի 1882

Բիթլիսի հարաւային Հայաստանի ամենանշանաւոր քաղաքներից մէկն է: Թէև այս կողմի քաղաքներուն մէջ Վան ամենին աւելի անուանի եղած է իւր հայաշատութեան պատճառաւ, բայց Բիթլիսը հայերը վաճառակալութեան կողմնակցատ աւելի յատկ անցած են քան թէ Վանի հայերը: Բիթլիսի ժողովուրդը բաւական քաջ է և աստիճան պատճառը իւր գիւղը եղած է թիւրքաւ: Այս անտառախիտ նահանգի մէջ հայերն մեծ մասամբ բուրդի շրջապատուած են: Բայց վաճառակալութեամբ և տամար շատ աւելի դերակցեցած լինելով քան թէ թիւրքերն և քիւրդերն, աղբիւրներն ունեցող տարրը հայն եղած է: Կոտորուած միայն թիւրքերն և քիւրդերն բաժինն է, քանի որ զինուորական և քաղաքական կառավարութիւնը բացարձակապէս սոյս ձեռքն է: Մի քանի հայեր միայն կը գտնուին քաղաքային պաշտօնակալութեան մէջ, բայց նոքա ալ թիւրքն աւելի թիւրք կազմին ցոյց տալ զիրենք:

Բիթլիս Վանի, Երզրումի, Մուշի, Մելիքի և Կիարբէքիի հետ յարաբերութեան մէջ է. այդ կողմերն երթեկող կարաւաններ գրեթէ միշտ անտարկան են: Միայն թէ ձմեռն յարաբերութիւնները դաւարածի պէս կը լինին, որովհետեւ Բիթլիս (Բաղէշ) սատարի կը լինի ձմեռն և փոխադրական ճանապարհներն ալ շատ անկանոն են. բնաւ չլինում ճանապարհը չը կայ: Բարձրին մինչև Կատուան, այդ ժողովուրդը կարեւոր նուաճանդար, որ 4 ժամանակ ճանապարհ է, տարածուած է Կահլանի ընդարձակ դաշտակայքը ուր ձմեռն այնչափ սաստիկ ձիւն կը լինի և վառարարութիւնը կը պատահին յաճախ, որ տարի չանցնի արհեստ մը քանի մարդ չը մնան: Արդ զաշտակայքին մէջ մի խան (քարվաճառ) միայն կայ ճանապարհորդները պատարար նամար, Ալամից խան անուն, որ շատ վաղուց չլինում և այժմ քաղաքակ է: Ճանապարհորդներն ի հարկին տեղակ է նորա աւերակներուն մէջ պատարարութեամբ: Չմեռ ժամանակ այդ դաշտին մէջ ձիւն ճանապարհորդութիւն չը լինի, ալ դասակներով որ բախիրի սահմակ (զանդ) նման մի բան է, միայն թէ բախիրը կընդ կամ ձիւնը լծուած կը քաշեն. իսկ դասակը նորա փոքր տեսակի է որուն մէջ կը նստի ճանապարհորդը և մի մարդ առաջին կը քաշի կը տանի. եթէ բնա լինի մէջը և կամ թէ ուղին արագ քաշի դասակը, մի մարդ ալ կաննի կը հրէ և այս կերպով կըրթան ստոյգին վրայն:

Թէև ձմեռվան ճանապարհորդութիւնը այսպիսի դժուարութիւններ ունի, բայց սա առաւելութիւնն ալ կունենայ որ ամառ ժամանակին աւելի ապահով կը լինի: Բիթլիսից իւր վաճառական ժողովուրդը շատ անգամ ճանապարհորդութիւններ կանեն և նետապէս շատ անգամ աւաղակներու հետ գործ կունենան: Չեղ յայտնի է որ անցած տարի երկու բիթլիսցիներ կարաւանի հետ Պարսկաստան գնացած ժամանակ կողպատուած և բաւանութեամբ էին և ուսուցան զիր—հիւպատոս վան. պ. Կամարական միջանցիկ թիւրք կառավարութեան քով այդ ամառապայմանները գտնել տալու համար, բայց մինչև այժմ դեռ չեն գտնուած: Եթէ պ. Կամարական, ուսուց մեծագործարութեան այդ աղբիւրի և ամենին յարգուած ներկայացուցիչը, նոս գտնուած ժամանակ *) թիւրքերն կը համարձակին դարձեալ ամեն գեշութիւններ անել, նապա որչափ աւելի գեշութիւններ պիտի պատահին, եթէ, ինչպէս կը լսեմք, գաւրուներն թողու իւր պաշտօն և երթայ պ. Կամարական, որոյ անուն պատկառելի և աղբիւրի եղած է այստեղ ո և է աղէկ անձանց:

Թողուք արտաքին հարաւորութիւններն և մի քանի խօսք ալ մեր ներքին վիճակին վրայ անելք: Բաւական ժամանակ է որ ժողովրդեան և մի քանի հայ բուսաւորներու մէջ սաստիկ վեճ ծագած է: Թիւրք կառավարութիւնը յատկապէս բաժանելով Բիթլիսը Վանին, քաղաքորդ գաւառներու հետ միացուց և Բիթլիսի նահանգը կազմեց:

տիկ վեճ ծագած է: Թիւրք կառավարութիւնը հայերը ստիպեց որ բոլորովին իրենց ծախքով մի խնուրի շինեն Բիթլիսին մինչև Երզրում, մինչդեռ քաղաքային վարչութեան (բեդլիշէ) պարտաւորութիւնն էր այդ, քանի որ փողոցները կանանաւորելու համար մասնաւոր տուրք կանէ: Ժողովուրդն: Հայերը և թիւրքաց հասարակ ժողովուրդն անոնք որ այդ ճնշման ենթարկուեցան, միայնակեցան և բողոքելով չը հնարանդեցան տեղական կառավարութեան այդ որոշման: Խաչմանուկեան էֆենդին, որ թիւրքաց կառավարութեան անգամ և միանգամայն հայոց վարչութեան զբաղակցուեց է, կառավարութեան կողմը բըռնեց և ուղեց հայ ժողովուրդը ճնշելով կառավարութեան կարին հնարանդեցուեց: Այդ եղաւ սկզբնապատճառ հայ բուսաւորաց և ժողովրդեան վեճին:

Պատրիարքարան միջամտեց այդ վեճին և դաշնակցութեան համար Վանին այստեղ զրկեց արժ. Արիստակէս վարդապետ Տէր-Սարգսեան: Սա ժողովուրդին կողմը բռնեց, բայց թիւրք կառավարչները զինք հանդիսա չը թողին և ստիպուեցաւ հետանալ: Այդ միջոցին Վանի ժողովուրդը երկու կուսակցութեան բաժանուած լինելով, թիւրքեան և Գարեղինեան, խրխիւնները մեծամասնութիւն կազմելով Վանի մէջ, յաջողեցան Գարեղին վարդապետը պաշտօնակց անել: Պատրիարքարան իւր սաւաշտարական սեղանակալ զԵրկեց այստեղ Գարեղին վարդապետ, յուսալով որ նա թիւրք պաշտօնակցներին կուսակց չորպաճնները կը հաշտեցունէ ժողովուրդին հետ: Բայց Գարեղին վարդապետ այդ պաշտօնակցներին և չորպաճններուն գործիք լինելով, իսկո՞՞ հարստանարուած ժողովուրդը այնչափ ճնշեց և յուսանաւորաց, որ այժմ 300-ի շուրջ ժողովուրդը հայ և թիւրք բուսաւորաց ձեռքէն ապստուկու յուսով անգլիական եկեղեցին ընդունեցին: Արդև իրենց ծախքով մի ժողովարան բացին և 200 սակի ճանապարհածախք վճարելով Կիարբէքիին անգլիական եկեղեցական տաշտոնակները բերել կը տան, պատուելի Թովմաս Պոյաճեանի ուղեկցութեամբ: Գարեղին վարդապետ իւր անցնելով փոքր նոքաչէն ժողովարանը և աշխատեցաւ համոզել յուսահատ ժողովուրդը, քաջ իրեն յայտնեցին թէ ոչ մնացած է այդ յուսահատներն անելու և թէ իւր խօսքերուն վրայ վստահութիւն չունենալով չեն կարող փոխել իրենց որոշումը: Զարմանալի է որ պատրիարքարան Գարեղինի պէս մի վարդապետ այստեղ զբեկեց, յուսալով որ կրնայ շահիլ կառավարութիւնը ի նպատակ ժողովուրդեան: Սա այն վարդապետն է որ Կիարբէքի թիւրքերի գործիք դառնալով, դապարիսկարով արտաքին գեր. Նաճարեանց Փիլիպոս եպիսկոպոսը որ հայ ժողովրդեան իր բաւանքը պաշտպանելուն համար քիւրդերուն սարսափ պատճառած էր: Սա այն վարդապետն է որ վերջին ժամանակներ Վանի մէջ թիւրքաց պաշտօնակցներին գործիք դառնալով, ժողովուրդեան սերն ու համարումը վախելող երկու անձեր, պ. ֆորթուղարան և Տաճատ, Վանին հետադուրեւ նկ տուաւ արտաքին պէս:

Մեր այս ներքին վեճերն պատրաստ են միշտ օգուտ քաղել օտարները: Բայց իրարական միտմաններն, եղուխներն ալ այցելութեան կը դառնան մեզ: Սրբա Մուշ, Բաղէշ և Վան պտրակել յետոյ, իրենց գործունեութեան յարմար կենարան ընտրած են Վան ուր կը մնան այժմ: Մեր բաժին նայելով, առ այժմ դեռ մի նշանաւոր գործ կատարած չեն այնտեղ, հարուստներու տունները կը յաճախեն. տգէտ և հարուստ մարդերն չորգործելով, նոքա հետ բարեկամական յարաբերութիւններ կը հաստատեն առ այժմ: Եթէ այստեղ խօսուածն ճիշդ է, ձմեռն այդպէս պիտի անցունեն Վան. բայց իրենց զխաւոր մը պիտի գայ 8-10 ընկերներով և մի Կենտրոնական վարժարան պիտի բանան Վանի մէջ, ուր Բաղէշէն և Մուշէն ալ աշակերտներ պիտի ընդունին: Կը վախցուի թէ սրբա իրենց նպատակին մէջ յաջողին քանի որ սառատ դրամ ունին և ամեն խորամանակութիւններն ալ գիտեն գործ դնել: Քանի որ մեր ժողովուրդը աղքատ է, եթէ մեր մէջին օգնողներ չը լինեն ձրի կրթութեան տարածմանը, հաւանորեն որս կը լինին ձրի դաստիարակութիւն տուող եղուխներուն:

Գ. Ս.

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

10նոյն, 19 փետրվարի: Այսօր վիկտորիա թագուհին Լոնդոնից հասաւ Վինզոր: Երկաթուղու կայարանում մի անցյալ պարտն թագուհու վրա ատրճանակ արձակեց: Ոչ ոք վերաբերված չէ: Յանցաւորը բռնվեցաւ: Նրա անունը Բոդերիկ Մակլին է, Լոնդոնի մէջ ճնշված, անգործ գործակատար: Առում են, որ նա խելագարված է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 փետրվարի: Ժառանգութեան ստանալի հարկերի նախագիծը հաստատված է ստացվելու է մէկից մինչև ինը ասոխ, նայելով թէ ժառանգը որքան մտաւ աղքատի է մեռնողին: 500 բուրջուց պակաս ժառանգութեանց հարկ չէ վերցնվում: Նախագիծ կայ գերբովայա հարկը բարձրացնելու մասին: Պէտքը Կուրնովո ուղեներ կառավարիչ է նշանակված:

10նոյն, 20 փետրվարի: Բիթլիսերը Մակլինին խելագար չեն համարում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 փետրվարի: Սպասում են, որ Սերբիան շուտով թագաւորութիւն կը դառնայ: Չինացիները ամրացնում են ուսուցչական սահմանները: Այդ գործի քննութիւնը յանձնվում է մի առանձին մասնաժողովի: Մասնաժողովի անդամ լինելու համար հրաւիրվում է Պրեժվալսկի:

10նոյն, 21 փետրվարի: Մակլին միայն սեպտեմբերին արձակված է խելագարների տանից:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 փետրվարի: Սերբի մէջ մտնելու են դատաստանական հիւնարկութիւններ 1869 թուականի կանոնադրութեան համեմատ «Приват. Вѣстн.» լրագրի մէջ տպված է մեղադրական ակա և պատաճիւն անբարոյսաների գործի վերաբերութեամբ, որոնք մասնակցեցին Սպասվեօյի գործին, Օդեսայի և Սեփուստոպոլեան երկաթուղիների տակի ակուն փորելուն, 1879 թ. փետրվարի 19-ի յանցաւոր փորձին, Չմբային պալատը ձայնեցնելուն, Սիգասայում ակուն փորելուն, Ս. Պետերբուրգի մէջ քարէ կամարի տակ և Սպորտայն փողոցում ակուն փորելուն, մարտի 1-ի երեւոնադործութեանը: Մեղադրվում են ընդամենը ինն յանցանքների մէջ թագաւորասպանութեան համար: Բացի այդ մեղադրվում են Մեղեցեօյին սպանելու և Սերսոսեան և Կիշինեօյեան զանաւարանների տակ ակուն փորելու յանցանքների մէջ: Դատաստարութեամբ են կախաղանի: Միկոյայով, Սուխանով, Ֆրոյենկո, Կորզիկիչ, Իսակով, Եմիլիանով, Տետերկա, Կերեկով, Կալիմով, Կետոշիկով: Տաճանակի արշաւանները անժամանակ. Բարսանիկով, Մերկույով, Արոնիկ, Մորոզով: Լոնդոն գտնաւորութեամբ է տաճանակի արշաւանների, 26 տարով: Տաճանակի արշաւաններին հանրերի մէջ դատաստարութեամբ են. Տրիգունի, Լեւասիգ, Ֆրիգենսոն. 20 տարով գործարանների մէջ Տրեկենսոն: Վճարված է միջնորդել Ֆրիգենսոնի պատիճը թեթեւացել 10 տարի կալանաւորութեամբ, իսկ Լեւասիգին 4 տարի գործարանների մէջ արշաւանացնելով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 փետրվարի: Պետական բանկի 5% տոմսը առաջին շրջանի արժէ 95 ռ. 50 կ., երկրորդ 91 ռ. 12 կ., երրորդ 91 ռ. 50 1/2 կ., չորրորդ 91 ռ. 37 կ., հինգերորդ 90 ռ. 25 կ., ներքին 5% առաջին փոխաւորութեան տոմսը արժէ 217 ռ. 75 կ., երկրորդ 216 ռ. 50 կ., արեւելեան առաջին փոխաւորութեան տոմսը արժէ 90 ռ. 12 կ., երկրորդ 90 ռ. 12 կ., երրորդ 90 ռ. 12 կ., ոսկի 8 ռ. 8 կ.: Բուսաց 1 բուրլ Լոնդոնի վրա արժէ 24,35 պէնս, Ամստերդամի վրա 123,50 պէնս, ուսուց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 207 մարկ 37 պֆ., Փարիզի վրա 256 ֆրանկ 25 սանտիմ: Բորսայի տրամադրութիւնը հանդիս է:

Թիւրքեր—հրատարակող ԳԻՐԿՈՐ ԱՐՄԻՈՒՆԻ

